# ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՎՐԱ

ՎՌԱՄ ՄԻՐԱՔՅԱՆ

## ԻՄ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևան ենք մեկնում. հայ աշխատավորության քրտինքով կերտված նորաշեն այդ քաղաքը, որը կենդանացավ, շունչ առավ միայն սովետական իշխանության օրով։

Դեռ Իրանում եղած ժամանակ բազմաթիվ անգամներ լսել ու կարդացել էի Երևանի ձեռք բերած նվաճումների մասին։

Յուրաքանչյուր անգամ Հայաստանի սովետիզացիայի տարեդարձը տոնելիս մեծ տեղ էր հատկացվում մայրաքաղաքին ու հանգամանորեն խոսվում նորաշեն այդ օրրանի վերելքի մասին։ Այդ բոլորը ես գաղութում լսում, կարդում էի և խանդաղատանքով ապրում Մայր հայրենիքով։ Բայց լինել հայրենիքում, մոտիկից տեսնել նրա նվաճումները երբեք չէի երևակայել։ Հայրենի հողի վրա ենք։ Գնացքը սուրում է արագ։ Ինձ թվում է, թե երազ է այս, քաղցր ու անուշ երազ, թե ես Հայաստանում չեմ, Արարատյան դաշտի քաղցրաշունչ օդը չեմ շնչում, այլ գտնվում եմ օտար ու անծանոթ մի հեքիաթային աշխարհում։

Սակայն ոչ, դա իրականություն էր, ես հայրենի հողի վրա էի։ Զառամյալ մայրս բերկրանքով ինձ ցույց էր տալիս Մասիսները, որոնք միգապատ ցցվել էին հեռվում։ Նրանք ժպտում, աչքով էին անում մեզ, կարծես բարի գալուստ մաղթելով բոլորիս։ Ուղևորները խռնվել էին վագոնների առջև, աղմկում, բացականչում էին, իրար ցույց տալով հեռվում կանաչների միջ սուզված շենքերը։

Գնացքը համրաքայլ ընթանում էր առաջ։ Մոտենում էինք քաղաքին։ Սպասումի ծանր պահեր անցան։ Ամբողջովին հետաքրքրություն դարձած ես հայացքով չափում էի հեռուները, որտեղից պիտի հայտնվեր հրաշք քաղաքը։

Վռամ Միրաքյան

Շոգեքարշը սուլեց, նրա սուլոցը արձագանք գտավ հեռվում, սուլոցները կրկնապատկվեցին։ Մոտենում էինք Երևանին։ Հեռվում երևաց կայարանը։

Զտեմանված իրարանցում էր տիրում կայարանում։ Մեզ դիմավորելու համար հավաքվել էր մեծ բազմություն։ Բարի գալուստ էին մաղթում մեզ. բոլորի դեմքը ժպտում էր բերկրանքից։

Շոգեքարշը հոգնած հսկայի նման կանգ առավ։ Դուրս թափվեցինք վագոններից. կառամատույցի վրա ենք։ Լայնանիստ Երևանը մեր դիմացն է։

Անմիջապես մեզ կայարանից քաղաք են տեղափոխում, Բաժանվում ենք իրարից։ Ավտոն մեզ տանում է քաղաք, մայրս լուռ լաց է լինում, նա հուզված է։ Նա անհասկանալի բառեր է շշնջում և կամացուկ արտասանում է ՍՏԱԼԻՆԻ անունը։ Ինձ թվում է, որ այդ նվիրական պահին իր ստացած ջերմ ընդունելության համար նա իրեն երախտապարտ է զգում Մեծ Մարդու հանդեպ։

Հոյակապ քարաշեն շենքերով փողոցները հաջորդում են իրար. մեքենաներով սրընթաց անցնում ենք քաղաքի միջով։ Անսովոր եռուզեռը, իրարանցումը, աղմուկն ու ժխորը զարմացնում են մեզ, նման բան չենք տեսել։ Թավրիզի խաղաղ ու անաղմուկ կյանքի մոտ դա թվում է անսովոր, բայց հետաքրքրական։

Վերջապես մեքենան կանգ է առնում, իջնում ենք, և մեզ ուղեկցում են նոր բնակարանում։ Մայրս և քույրս հոգնել են երկար ճամբորդությունից, նրանք հանգրստանում են, իսկ ես դուրս եմ նետվում փողոց, ժամերով թափառում։ Անթիվ նոր փողոցների եմ հանդիպում, մեկը մյուսից գեղեցիկ, մեկը մյուսից հոյակապ, բայց ոչ մեկի անունը չեմ գիտեմ։ Մի քիչ շփոթված ու երկյուղով շարունակում եմ գեգերումներս, իմ դեմ հանկարծ մի վայր հրապարակ է բացվում, որի մի ծայրին կանգնած է անմահ Վ. Ի. Լենինի հրաշագեղ արձանը։ Լենինի, Նալբանդյանի, Աբովյանի, Ստալինի անվան փողոցները իրենց շքեղությամբ զարմացնում են ինձ. այդ բոլորը կառուցվել է Սովետական իշխանության օրոք, հայ ազատագրված աշխատավորության միահամուռ ջանքերով։

Ստալինյան պողոտայի վրա ծառացած է օպերայի վիթխարի շենքը։ Նա կառուցված է ճարտարապետական անգերազանցելի արվեստով. ամեն ինչ այստեղ գեղեցիկ է ու ակնահաճ։ Օպերան դյութում է անցորդին։

Երևանը բազմամարդ մի քաղաք է, նա ապրում է տեսնված վերելք։ Նա համառորեն ծավալվում է դեպի մոտակա բլուրները, դեպի մերձակա անմարդաբնակ դաշտերը։ Զանգվի ստվերը զերծ չեն մնացել այդ համառ հետապնդումից։ Գետի աջ ու ձախ ափերին, բնական ամրությունների վրա, որպես լեռնային արծիվների բներ՝ թառել են քաղաքացիների հողաշեն տները։ Երկու տասնյակ տարվա ընթացքում քաղաքը դարձել է անճանաչելի։ Երբեմնի հողաշեն ու անկենդան քաղաքը վերածվել է արդյունաբերական խոշոր ու կենսախինդ կենտրոնի։

Մայրաքաղաքը մասնավորապես գեղեցիկ է գիշերը, էլեկտրական թանձր լույսի տակ քաղաքի բազմամարդ փողոցները կենդանանում են, ժխորով լեցվում։

Երևանը համալսարանական քաղաք է, դա Սովետական Հայաստանի մտքի օջախն է։ Ո՞րքան հոյակապ կրթական ու գիտական հաստատություններ կան այնտեղ՝ Մոլոտովի անվան Պետական համալսարանը, մանկավարժական, պոլիտեխնիկ, բժշկական, անասնաբուժական, գյուղատնտեսական և այլն բազմաթիվ ինստիտուտներ։

Ընդունելությունները սկսվել են. համալսարանում և ինստիտուտներում բազմաթիվ դիմումներ կան, շրջաններից եկել են հարյուրավոր ուսումնածարավ երիտասարդներ հագեցնելու իրենց ուսման ծարավը։

Ես նույնպես գնում եմ համալսարան, ներկայանում ռեկտորին և այցելությանս նպատակը հայտնում իրեն։ Բարի մարդ է, ժպտում է և սիրով ընդունում ինձ։ Նրան հետաքրքրում են արտասահմանից եկողներն իրենց կրթական ցենզով։

Ես համալսարանից դուրս եմ գալիս թևթևացած սրտով. հպարտ եմ և այդ ամենի է խանդավառում ինձ։ Ես արդեն ուսանող եմ և ապագայի նշանակարները ոգեշնչում են ինձ։

Սեպտեմբերի երեքը վրա է հասնում։ Ժամը ութ և կեսին քայլում եմ դեպի համալսարան։ Կես ժամ ուշացել եմ, բայց չեմ շտապում, կարծում եմ, որ մեզ մոտ՝ Իրանում ընդունված սովորության համաձայն համալսարանական առաջին օրը ուշ կսկսվի, պարապմունքներ չեն լինի, այլ միայն կծանոթանան ուսանողության հետ, հետևաբար շտապելու կարիք չկա։ Սակայն զարմանքս մեծ է լինում, երբ համալսարանի սեմից ներս մտնելիս ինձ պես ուշացած ընկերներից իմանում եմ, որ պարապմունքն արդեն սկսվել է և դասախոսը կարդում է իր լեկցիան։ Ամոթահար և գլխիկոր ներս եմ մտնում մեր լսարանը. բոլորը հետաքրքրությամբ ինձ են նայում։ Դասախոսը խոժոռում է դեմքը, բայց մի պահ միայն։ Նա հարցնում է ուշացմանս պատճառը. իմ պատասխանը լսելով բարեսրտությամբ ժպտում է, ապա թույլ տալիս նստելու։

Լսարանում հնչում է դասախոսի թավ ձայնը. ուշադիր ուսանողները լարված ունկնդրում են նրան։

Ես հետաքրքրությամբ ու մի ներքին մրդումով դիտում եմ շուրջս, տեսնում մի քանի տասնյակ երիտասարդների։ Նրանց լարված ու խոհուն հայացքներն արտահայտում են ուսման անհագ ծարավ, նրանք զինվում են գիտության նոր ուսմունքով և գոտեպնդվում համամարդկային նպատակների իրականացման համար։

Ուսումնական առաջին օրը հարանման մտորումների հետ միասին վերջանում է։ Ես ժամը երկուսին վերադառնում եմ տուն՝ Երևանում իմ երչանիկ վերածնունդը ապրելու համար։